ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

19.06.2013թ.
201-ի 8

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

2013թ-ի ապրիլի 18-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը իր թիվ 200-ի 7 տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Երեւանի քաղաքապետարանին եւ խնդրել էր տեղեկություններ Երեւան քաղաքի Մաշտոցի պողոտայի Փակ շուկայի շինարարության վերաբերյալ:

Սակայն, քաղաքապետարանը խնդրված տեղեկությունների մի մասը՝ Փակ շուկայի նկատմամբ սեփականության կամ փակ շուկայի վարձակալության հիմքերի վերաբերյալ խնդրված տեղեկությունները չէր տրամադրել:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ե՞րբ, ի՞նչ իրավական ակտով, ու՞մ, ի՞նչ նպատակով, ի՞նչ իրավունքով (սեփականության իրավունքով, վարձակալության իրավունքով) եւ որքա՞ն ժամկետով է հատկացվել Փակ շուկան,
2. Խնդրում ենք տրամադրել Երեւան քաղաքի Մաշտոցի պողոտայի Փակ շուկայի հատկացման պայմանագրի պատճենը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան